



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN
КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Մյունիքի մարզի Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21 e-mail info_kapan@aarhus.am, kapan.aarhus@mail.ru

Կ N-001/14

<17>_մարտի_2014թ.

ՀՀ բնապահպանության նախարար

Արամ Հարությունյանին

Կապանի Օրհուս կենտրոնի

համակարգող Աշոտ Ավագյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագիրը և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց իրազեկության աստիճանի բարձրացումը, խնդրում եմ Ձեզ, Կապանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասը տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Կապան քաղաքի տարածքում գտնվող բազմաթիվ “լքված” հանքերի /որոնք շահագործվում էին խորհրդային տարիներին և այսօր չեն շահագործվում/ հետագա ճակատագրի մասին: Մասնավորապես անհանգստացնում են Կապան քաղաքի կենտրոնում գտնվող հանքերի և Կապանի մերձակայքի հանքախորշերը, որոնք չունեն դարպասներ և վտանգ են ներկայացնում երեխաների համար: Իսկ անձրոտ օրերին հանքախորշերից դուրս եկող դեղնաշագանակագույն ծանր մետաղներով աղտոտված գրունտային ջրերը (ՀՀ Ազգային ակադեմիայի էկոլոգանոսֆերային հետազոտական կենտրոնի ուսումնասիրության հաշվետվություն) լցվում են փողոցները և շենքերի բանուկ մասերը, որտեղ խաղում են երեխաները:
2. Ո՞վ է պատասխանատու այդ հանքախորշերի անվտանգության ապահովման և գրունտային ջրերի կարգավորված ջրահեռացման համար:
Կից ներկայացվում են լուսանկարներ նշված փաստերի վերաբերյալ:

“Տեղեկատվության մատչելիության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում(բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30 օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝ Աշոտ Ավագյան

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող